«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

2024/2025 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԴԻՄՈՐԴՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

ԿԵՏ 78

Ընդունելության քննություն(ներ)ը դրական միավոր(ներ)ով հանձնելու դեպքում ՀՀպետական բյուջեի միջոցների հաշվին **մրցույթից դուրս** ընդունվում են՝

- ✓ ժամկետային պարտադիր զինվորական ծառայության ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելիս **1-ին** կամ **2-րդ խմբի հաշմանդամության** կամ **ֆունկցիոնալության ծանր** կամ **խորը** աստիճանի սահմանափակում ունեցող զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողները,
- ✓ զոհված (մահացած) զինծառայողների **ծնողները, ամուսինը (կինը)**, մինչև 27 տարեկան **զավակները**
  (Համաձայն ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ ոստիկանության և ՀՀ ազգային անվտանգության ծառայության տված տեղեկանքների):

ԿԵՏ 79

Վճարովի համակարգի համար առնվազն **անցումային միավորներ** հավաքելու դեպքում **անվճար ուսուցման համակարգ** են ընդունվում՝

- ✓ **1-ին** և **2-րդ** խմբերի **հաշմանդամություն** ունեցող անձինք և **մինչև 18 տարեկան հաշմանդամ երեխաները** կամ **ֆունկցիոնալության ծանր** և **խորը** աստիճանի սահմանափակում ունեցող անձինք (երեխաները),
- ✓ **առանց ծնողական խնամքի** մնացած՝ մինչև 23 տարեկան երեխաները:

ԿԵՏ 80

Մարտական հերթապահություն իրականացնող զորամասերում **պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած** և **զորացրված դիմորդները**՝ զորացրվելուց հետո՝ **մեկ տարվա ընթացքում անվճար** ուսուցման մրցույթին մասնակցում են **ընդհանուր հիմունքներով**, իսկ վճարովի ուսուցման համակարգ ընդունվում են **մրցույթից դուրս**:

ԿԵՏ 81

Առանց ընդունելության քննության ՀՀ կառավարության կողմից հատկացված պահուստային տեղերի հաշվին բուհ են ընդունվում ՀՀ կառավարության 2018 թ. ապրիլի 12-ի N **451-Ն որոշման** հավելվածի 7-րդ կետով սահմանված դեպքերում, **Ժաուտիկովյան, Մենդելեևյան, մեգապոլիսների, Կիրառական կենսաբանության միջազգային օլիմպիադաների անհատական մրցանակակիրները**, ինչպես նաև **տարբեր մարզաձևերի գծով աշխարհի, Եվրոպայի առաջնությունների, օլիմպիական խաղերի մեդալակիրները՝** մրցանակը ստանալուց հետո **երեք տարվա ընթացքում**՝ ընդունելության դիմում-հայտում համապատասխան (առարկայական) մասնագիտություններ հայտագրելու դեպքում: